

Հարկաւորութիւնը: Այն հնարը, ձեռք, որ մարդիք ընդունում են կանոնաւորելու իւրեանց յարաբերութիւնները, անուանում ենք (օրէնք): Աւրեմն կայ տրամաբանական կապ օրէնագիտութեան և քաղաքական տնտեսութեան մէջ: Աւղիղ հասկացողութիւնը երկրորդի ուղիղ պարզում է առաջինի հարկաւորութիւնը, և պարունակութիւնը: Այսպիսի կերպիւ քաղաքականութիւնը պահանջելով կրթութիւն, միւսնոյն ժամանակ պահանջում է տնտեսականութիւն:

(պիպի շարունակութիւն)

Սէնէ+էրէ: Արժեքներ

ԽԱՆԳԱՐՄՈՒՆՔ ԸՆԾԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՀՆՈՒՄՆ ԵՒ Ի ՆՈՐՈՒՄՈՒՄ *):

Գ Ր Ե Ա Ս Գ Ա Ր Ի Է Լ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Ս Վ Ա Ջ Ե Ա Ն

Ահաւասիկ դարեր են անցել այն ցաւալի ժամանակի վերայ, երբ մեր ազգը կորցնելով իր քաղաքական միութիւնը, իր թագաւորական թագն ու գաւազանը, ընկճել է իր պարանոցը օտար ազգերի լծի տակ: Թողնենք այն պատահական թըշուառութիւնները, որոնք սրբնթաց կայծակի նրման հասնում դաղում էին խնդրահարմար և հարկաւորուած էր շատ տարրեր քաղաքական և տնտեսական պայմանների առաջնորդութեամբ ապրիլ ու կառավարուիլ: Նորա նուիրական երկիրն արդէն մաս մաս էր բաժանուած. նորա ապրուստի եղանակը բողբոջին փոփոխուել էր. նորա միակ գործն էր մաքառել կեանքի վտանգների դէմ և որոնել իր ապահովութեան բունը, Բնական է որ այսպիսի կեանքից

Հետզհետէ ազգային միութեան կապը թուլանում էր, մեր ազգը միւս հին ազգերի նման արդէն անգառնալի կորստեան դուռն էր հասել, եթէ չէին եղել մեր մայրենի լեզուն — կրօնը: Այս մայրենի և կեղեցին մեր տառապեալ ազգի մի միակ անառիկ և անթափանցիկ պատարարն էր այս դարեւոր ժամանակների մէջ. մեր մայրենի լեզուն մի միակ ընդհանուր շղթան էր, որ կապում միացնում էր մինչ ցարդ մեր Թուրքիարնակ, Ռուսիարնակ և այլ Հայերը միմեանց Հետ իրրե ազգ: Այդ երկու պահանջան հրեշտակները — կրօնն ու լեզուն — միմեանց ջնջակցութեամբ պահպանել են և պահպանում են մեր ազգութիւնը, և եթէ Հայն իրրե ազգամարդկութեան հորիզոնի վրայ մի նուազ շունչ է առնում այդ մեր մայրենի լեզուի և կրօնի փրկարար շնորհն է: Սրանցից մէկն (եկեղեցին) ահաւասիկ Աւետարանական անխախտելի հիման վերայ արդէն ամրացած կեցած է մեր բարդի պատահարաց դէմ, իսկ միւսը (լեզուն) դորա անառիկ և ապահով ծոցում հետզհետէ մշակուելով՝ ծածանում է ահաւասիկ մեր Հայութեան գլխին իրրե այժմու միութեան գրոշակ: Որքան փափազելի է ուրեմն, եթէ այս մշակութիւնը մեր այժմեան ուսումնականների եռանդոտ աշխատասիրութեամբ և մանաւանդ լեզուի անաչառ և ճիշդ քննադատութեամբ շնորհէր մեզ ցրուեալ Հայերիս համար մի քանի արդեան բարբառների միջից մի ընդհանուր զրականական դիւրնտել բարբառ և աւելի ամրապնդէր մեր միութեան նուիրական կապը:

Մեր լեզուն, մեր մայրենի դարաքաշ լեզուն, ինչպէս և նորա տէր ազգը իր պատմական կեանքի մէջ շատ և շատ ցաւալի վիճակների մէջ է եղել: Այդ լեզուն կարելի է ասել, ամեն լեզուների տարրերն էլ փորձել է: Մեր բնիկ մայրենի լեզուն զեռ չկազդուրուած և ինքնուրոյն անկախ ու սեփական կերպարանք չ'առած մինչև Երդ դարն և այնուհետև կարող էր զրացի և եկաւոր լեզուների ազդեցութեանն ենթարկուիլ. նա փոխանակ իր իսկական պարզութիւնը պահպանելու գուցէ ընդունում էր օտար լեզուների ոճերը, դարձուածները, շատ անգամ և առողանութիւնը: Ուրեմն ի նչքան կարեւոր և միանգամայն գովելի

(*) Տպեալ ի տպարանի Խալիպեան ուսումնարանի. ի Թէոդոսիա. 1869, ՌՅԺԹ:

աշխատութիւն կարող էր համարուիլ մի այնպիսի ուսումնական վաստակ — որը ցոյց տար մեզ՝ մեր լեզուի ծագման և զարգացման ճշմարիտ պատկերը։

Այսպիսի մի ակնկալութեամբ և ուրախութեամբ սրտի ընդունեցինք Վասնգարմուշը Հայկաբանութեան ի հնումն և ի նորումն, վերնագրով զըբոյկը, որ ի յոյս է եկել արդէն մի տարի*) յառաջ Գեր-Գարրիէլ Եպիսկոպոս Այվազեանի հեղինակութեամբ։ Այդ զըբոյկը որ տեսակի կողմից առաջինն է համարվում Հայ դպրութեան մէջ, զորոց բարբառով է գրուած։ Անտարակոյս եմք որ մեր Հայկաբաններից շատերն արդէն ծանօթ են այդ աշխատութեանը. աւելորդ չ'է այնու ամենայնիւ համառօտակի պատմել նորա ըովանդակութիւնը։

Գրքուկի սկզբում Սրբազան հեղինակը յառաջարանի մեջ ասում է՝ «Մեր Հայոց մատենագրութեան զիսին եկած ցաւալի անցքերից մէկն է զըրարառի խանգարուիլն ու այլանդակուիլը. այս երևում է՝ Ա) Ե-րդ և ԺԱ-րդ դարերէ հելլենիստ լեռնաշխարհի Բ) ԺԵ-րդ դարէ Լատինաշխարհի և Գ) Ուսումնական մի քանի Հոյերէ Բրահմանական վաստակներից (այսինքն առհասարակ նոցա թարգմանութեանց և գրուածոց միջից)։ Սորա հետ յարակցում է, որ ինչպէս հայրենեաց աւերակները մարդուս լացը կ'երերն, նոյնպէս և մեր հոյակապ լեզուի փլատակների տեսարանը ողբալի է և աւաղելի։

Հետևաբար՝ առաջին զիտում Սրբազան հեղինակը ցոյց է տալիս լեզուի խանգարմունքը՝ «Ե-րդ և ԺԱ-րդ դարերի մի քանի հելլենախօս թարգմանչաց գրուածների մէջ, և Գեռ Ս. թարգմանչաց ժամանակից, ասում է գտնուել են ումանք ո՛ր չ'հաւանելով մեր լեզուի մի քանի ձևերին, Յունաց լեզուի ձևերն ընդունեցին ինչպէս «ողորկ ձև և ճախարակեալ յօրինուածութիւն,» արդեան մի քանի Հայ թարգմանիչների կամ մատենագիրներին նման, որոնք սխալուածն գործածելով այժմեան Եւրոպական լեզուների ձևերն ու դարձուածները հակառակ մեր լեզուի պարզու-

թեան, Այդ հելլենախօս մատենագրութեանց շարքն են, ասում է Սրբ. հեղինակը, Փիլոնի Եւրայիցւոյ, Արիստոտելի և Պլատոնի գրուածների թարգմանութիւնքը, Գիոնէսիոսի Թրակացւոյ քերականութեան թարգմանութիւնը և ըն, և այդ նորաձևութեան հետևողների պարադլոս է համարում մեր թարգմանիչներից մէկը՝ Գաւիթ անյաղթ ներդինացին։ Սա մեր մայրենի լեզուն չքաւոր և թերի ճանաչելով աշխատել է հելլենացնել այդ լեզուն «այսինքն գործածել աւելի հելլենական ոճեր և դարձուածներ թողնելով միմիայն յարտաքուստ հայարարառ հնումն ու տառերը, և այդպիսով պատրաստել է նա իր հետևողների համար մի անօգուտ մեծահատոր վաստակ, բոլորովին խորթ Հայոց լեզուի հոգուն։ Այս բանն հաստատուելու համար Սրբ. հեղինակը առաջ է բերում իրրև օրինակ Գաւիթի գրուածներից մի քանի հատուածներ — որոնք արդարև պարզ ցոյց են տալիս ընթացողին սրբազանի խօսքերի ճշմարտութիւնը։

Երկրորդ զուխը բովանդակում է իրա մէջ լեզուի խանգարման նկարագիրը՝ ԺԵ-րդ դարի լատինահայոց գրուածների մէջ։ Նախ՝ Սրբազան հեղինակը յիշում է այն պատմական յեղափոխութեանց մասին, որոնք առ հասարակ արևելքը զըրկիցին իր սեպհական անկախութիւնից — ի թիւս այլոց Հայաստանն էլ ենթարկուեցաւ օտար ազդեցութեան թէ քաղաքական և թէ այլ հասարակական գործերի մասով։ Խաչակրաց արշաւանքը, Վիլիկեցոց եկեղեցականների դէպ ի Հոռովմն ցոյց տուած հակամիտութիւնը և լատինահայ Ունիթոնաց գրականական վաստակները ու նորաձևութիւնները շիթեցին արդարև մեր հայկական կեանքի պարզութիւնը։ Լեզուն ևս շատ վէրքեր է կրել այս շիթթ հանգամանաց մէջ — ինչպէս յայտնի է Ոսկան վարդապետ Երևանցւոյ, Վարդանայ Յունանեան, Բարսղի չ'հայոյ և ըն. և մինչև անգամ Միթիթար Աբբայի Սերաստացւոյ գրուածներից։ Այնպէս որ՝ ասում է Սրբ. հեղինակը, ինչպէս Ե-րդ դարում շատ հելլենասէրներին հաճելի էին Գաւիթ Անյաղթի թարգմանութիւնքը, նոյնպէս և այս մատենագիրների գրուածքը, ինչպէս օգտակար և պիտանի նորաձևութիւն, հաճելի կ'ըլլուային լատինասէրներին։ Եթէ այս սխալ նորասիրութիւնը

(*) Չայս յօդուած ի վաղուց հետէ Խմբագրութիւնս ստացած էր։

չ'ինէր՝ Սրբազանը կարծումէ, որ դժուար կ'ինէր Աստուածաշնչի պարզ թարգմանութեան և այլ եկեղեցական գրեանց լեզուի հոգու առաջնորդութեամբ փոքր ի շատէ ախորժելի համարել Լատին լեզուի անճաշակ և այլանդակ ոճերը։ Այս զգուելի խորհուրդներն իրրեւ լատինասէր գրիչներն պատու՝ Սրբազանն ցոյց է տալիս մեզ Ոսկան վարդապետի գրած յառաջարանի միջից (Աստուածաշնչի մէջ) և աւելի անձոռնի դարձուածները նոտրագրով որոշում է իրրեւ ապացոյց, նշոյնպէս յառաջ է բերում մի քանի անձոռնի օրինակներ։ «Օրինակաց և նմանութեանց», անունով գրքից՝ որը ցաւելով է յիշում Սրբ. հեղինակը, որ այժմեան քարոզիչներէից ոմանք դեռ պատուում և ընդունում են հակառակ ազատ ճանաչողութեան, Շատ անձոռնի ձայներ են գալիս Ունիթոսաց պատարագամատուցի միջից ևս, որոնք Սրբ. հեղինակը անխնայ ներկայացնում է ընթերցողին և պարզ երևցնում է Լատին լեզուի խորդ օրինակները, Այնուհետև Սրբազանը բաւական համարելով այդքան օրինակներն ասում է. «Լարկ է այնու ամենայնիւ ասել որ այն տղիտութեան ժամանակներում կոյն շարքը որ ունի յայտնի բեանս էին Լատին լեզուի խորթութիւնները և մեր նախնեաց ուղղափոստութեանն օտար համարող բառերն ու դարձուածները, այնպէս որ մեր ազգը առժամանակ մի լուծեամբ ընդունելով այդ նորաձեւութիւնները՝ յետոյ իսկոյն մերժեց, և այդ նորաձեւութիւնները մնացին միայն լատինացեալ Հայերի գործածութեան բաժին, այնպէս որ այդ Լատինահայք Հռովմէական բռնակալութեան տակ գողով ստիպուած էին ընդունել լատինական գործունէութիւնքը, եթէ ոչ հերետիկոսների կարգը կ'գատուէին։ Բայց՝ ասում է Սրբ. հեղինակը, Մխիթար Արքան և նորա առաջին աշակերտները, թէ և այս հռովմէականաց պահանջն անտեղի և անիրաւ էին ճանաչում, այնու ամենայնիւ շրջապատող բռնակալութեան լծի տակ ճնշուած՝ չ'էին կարող բոլորովն ղնչացնել այդ գրականական ծանր լուծը, վասն որոյ նոքա անմիջապէս սկսան հոգալ նուազեցնել այդ լծի ծանրութիւնը ուղղափոստ բառարաններ և քերականութիւններ յօրինելով Մրխիթար—հայկազեան բառարանը՝ նորա աշակերտ-

ներից՝ Հ. Մատթէոս Եւզովիացին — Լուսաւորչի վարուց պատմութիւնը, Հ. Արթանէս Ասկերեան՝ յստակախօս թարգմանութիւններ և մանաւանդ Հ. Միքայէլ Չամչեան՝ իւր քերականութիւնը, Մխիթարեան հարց հետեող աւելի ջանադիր հայկաբաններ ևս պատահեցան, և մեր մայրենի լեզուն հետզհետէ ազատուեցաւ ծանր և դժուարակիր լծից՝ նոցա ճշմարիտ ուսումնասիրութեամբ, այնպէս որ նորափետուր զարդարուեցաւ մեր լեզուն։ «Ճոխ և վայելչազարդ իրրեւ զնոր փիւնիկ», Մխիթարեան Հարց գրականական վաստակի յառաջագիմութիւնը՝ Սրբազանի կարծիքով առանց արգելքների չ'էր, թէպէտ նոցա մէջ կան այնպիսիները—որոնք Եւրոպական լեզուաց օգնականութեամբ հասել են կանոնաւոր և կոկ յստակաբանութեան, նոցա առաջին ելած գլխաւոր խոչընդոտներն են՝ Ա) Եւրոպական լեզուներին տարապայման հմուտ լինելները և Բ) աշխարհարարի գործածելու անհրաժեշտ հարկը։

Երբորդ գրուելը լեզուի խանգարման գործը շրջանն է ցոյց տալիս մի քանի Ռուսիարեակ հաշիբի դուրածների մէջ, Այս գլխի սկզբում Սրբ. հեղինակը համատօտակի ցոյց է տալիս արեւմտքի ազդեցութիւնն արեւելքի վրայ մանաւանդ Տաճկաստանի Հայերի վրայ, բայց այս ազդեցութիւնը հարազատի ազդեցութիւն է այլ ոչ օտարի, որովհետև Մխիթարեան Հարց արեւմտք առանց նանալով այնքան մշակեցին մեր մայրենի լեզուն, որ ինչպէս վերեն յիշեցինք, կազմելով զանազան հայացի գրեանք՝ միջոց էին տալիս հեռաւորներին ևս օգտուել, որովհետև Տաճկաստանն աւելի մօտ էր նոցա, — վասն որոյ և Տաճկաստանի Հայերի մէջ երևցան հետզհետէ բաւականաչափ հմուտ պարզափոստ հայկաբաններ՝ ինչպէս օրինակ Յովհան քահանայ Աւանանդեցին, Գրիգոր վարժապետ Փէշտամալճեանն և Միքայէլ վարդապետ Սալբանթեանն, որոնք «Գրեթէ ինքնուսոյց հայերենագետք եղեն», Տաճկաստանի Հայերի վիճակը լեզուի կողմից բաւականաչափ մխիթարական է երևում, Ռուսաստաններ ընդ հակառակն, որովհետև շատերը անզգուշութիւնից ուսական դարձուածները իրանց ախորժելի համարեցին և ահաւասիկ մենք շատ գրուածների մէջ տեսնումենք Հայի լսելիացը

խորթ, անխորթ և կուտակեալ բարգուծիւններ ու ոճեր, միով բանիւ ուսարանութեան և հայկարանութեան զգուելի խառնուրդ: Այս խորթութիւնքը ցոյց տուուղ հասուածները վեր է առել Սրբ. Հեղինակը 1794 թուին Նոր - Նախիջևանում տպուած «Արկածք Տելեմարայ», անունով գրքից՝ որ Զարար Մարգարեան Խօջենց Երևանցւոյ թարգմանութիւնն է: Նոյնպէս և յառաջ է բերում մի օրինակ ուսաց մի պաշտօնական թղթից թարգմանած և առհասարակ յիշում է, որ մեր լեզուի խանգարուելու ազատ ճանապարհ եղել են զանազան պաշտօնական թերթերի թարգմանութիւններ — որոնք ընդունում էին հետզհետէ մեր զիւանասանց մէջ իրրե նախադադար, մանաւանդ զանազան արքունի հրովարտակների և այլ վկայագրերի թարգմանութիւնքը, ի թիւս որոց և «Բազմահոջակ Պալափնիինը», Բայց Սրբ. Հեղինակը չէ մոռանում, որ ատենական ոճի բառերն ու դարձուածներն հեշտ չ'են թարգմանում, ուստի և ներքի է համարում հոգևոր զիւանասաների համար ատենական գործածութեանց սխալները՝ յորդոր կարգալով այնու ամենայնիւ այժմեան Ահհափառ Աթոռիկոսի պաշտելի հրամանի անուամբ որ ջանադիր լինին որքան կարելին է՝ յստակել և պարզել ատենական գրուածների մէջ ևս մեր մայրենի լեզուն:

Հայկարանութեան խանգարման պիտառը շրջանների նկարագիրը կնքելու ժամանակ Գերայ. Սրբազանը երկու առաջարկութիւն է անում «Արբեցանկալիք ամենայն հայրենասէր սրտից», և 2) լինի թէ ուսմականի (աշխարհաբառ) յաճախակի գործածութիւնը խափան լինի գրաբառի յառաջադիմութեանը, այլ աշխատել որ այս երկու լեզուքը միմեանց օժանդակութեամբ թեւ թեւի տուած հասնին իրանց բնիկ պարզութեանը, — ինչպէս Հելլենացւոց արդեան լեզուն փորձով ցոյց է տալիս այդ բանը: Գովելի ազգասիրութեամբ խրախոյս է կարդում Գերայ. Սրբազանը չափաւորել երկու կողմից ևս այն մոլեռանդ զգացմունքը, — որով ոմանք հալածում են գրաբառը, ոմանք աշխարհաբառը: Հարկաւոր է Սրբազանի կարծիքով՝ միջոց տալ ուսմիկն և մանկուոյն յառաջադիմել կարևոր ուսմանց և զիտելեաց մէջ, —

որոնք ի հարկէ աշխարհաբառի միջոցով են ձեռք բերում: Արդէն փորձը ցոյց է տալիս, որ մեր այն խառն և բազմաբարբառ ուսմական լեզուն — որ սրանից յիսուն վաթսուոն տարի յառաջ բոլորովին անյարմար էր գրուածների մէջ գործածել, արդէն այնքան մշակուեցաւ, որ այժմս ընդունելի և միանգամայն հաճելի է ամէն Հայի համար: Ի հարկէ այսպիսի նախանձաւոր ընթացք ունենալ ամենքիս էլ ցանկալի է և ամէնք էլ կ'ստիպագին ազգասէր Հեղինակի հետ՝ «Թո՛ղ ժրանան ուրեմն», ասելով, «մեր լեզուի քաջագօտի մշակները՝ գրոց ճօխ և ազնիւ հայկարանութիւնը մշակելու և միանգամայն մաքրելու աշխարհաբառը», Բ) Հրաւիրում է Սրբ. Հեղինակը Ռուսաստանցի Հայերէն մաքրել իրանց շարադրութիւնքը օտարախորթ և նորամուտ բառերից և ոճերից, — մի բառուսերէն և Հայերէն բառարանի միջոցաւ: Այստեղ իսկապէս յայտնում է Սրբազանն իր նպատակը ասելով՝ «Եւ հա ի ցոյց և ի հաւաստիս կարևորութեան այսպիսոյ բառարանի՝ շարագրեցաւ սո ի մէջ տետրախ», :

Գ) րդ գրուելը վերջացնելիս Սրբազան Հեղինակը առաջարկում է գրքուելի վերջում մի «Յուցակ օտարոտի բառից ինչ և բանից՝ որ յաճախագոյնս վարին ի շարադրածս ոմանց ի Հայոց Ռուսաստանեաց», և այս վերնագրից երևում է որ այդ բառերը շատ են գործածուում Ռուսաստանի Հայերի գրուածների մէջ, բայց պէտք է զիտնալ, որ դրա պիտառապէս ատենական գործածութեան բառեր են, սխալ գործածուած տիտղոսներ կամ պատուանուններ թէ քաղաքական և թէ եկեղեցական իշխանաւորներին կամ աստիճանաւորներին վերաբերելի և լին: Աւելի յիշատակութեան արժանի են մի քանի ուսաբանութիւնքը, ինչպէս զորօրինակ —) աճականը յատկացուցչի փոխարէն գործածելը, Բ) դերանունների աւելորդ կրկնութիւնները, Գ) աճականը գոյականից նախադասելը, Դ) միջանկեալ մտքերը պարբերութեանց սկիզբը կամ վերջը գնելը՝ մէջ տեղը գնելու փոխարէն: Այսպիսի սխալներ պատահում են գրաբառ գրուածների մէջ: Ի՞՞՞՞՞ աշխարհաբառի համար Սրբ. Հեղինակը յայտնում է իր յոյսը՝ որ զուցէ՛ հետու չ'է այն ժամանակն՝ երբ մեր ազգը կ'ունենայ ամեն տեղ միմիայն

մէկ աշխարհիկ լիզու ամենքին զիրաճաս և զիւրնտել, Եւ աշխարհարառոի յառաջագիմու թիւնից զբարառոին ո՛չ մի միւսս չէ սպասում Սրբ. Հեղինակը (մի քանիսի կարծեաց հակառակ), մանաւանդ երբ զբարառոի նիւթերը խոհեմաբար գործադրուին աշխարհաբառը կազմելու համար: Արդարացի նախանձախնդրութեամբ մեղադրում է մեր պիտու խմբագիրներին, թարգմանիչներին և մանաւանդ զիրենքին, — որոնք շատ անգամ թողնելով մեր լիզուի բառակազմութեան կամ պարզ գործածութեան հնարները — իրանցից բարդում, կրկնարարում և անանցում են շատ անձաշակ և խորթ բառեր և բոլորական մի քանի լիզուների բառակազմութեան ձևով: Սրբ. Հեղինակն այդ տեսակ բառերից մի քանիսը միայն ցոյց տալով՝ յիշում է այն զիտաւոր սխալները — որոնք անում են մեր Ռուսաստանցի Հայ Հեղինակները, Ա) մեր լիզուի բառակազմութեան կանոններին հակառակ ծանր և երկայնաձիգ բարդութիւններ են գործ դրնում զերմաներէնի բարդութեանց օրինակով. այստեսակ բառերից բաւականաչափ օրինակներ յառաջ է բերում Սրբ. Հեղինակն, ինչպէս երևում է իրրև ապացոյց, թերևս միայն մի գրչի պատկանեալ, զորօրինակ « կանոնապատշաճ, « ջրացամաքային, հանդիսակատարութեան », և յն. Բ) մեր նախնիք, ասում է Սրբ. Հեղինակը, մանաւանդ սուրբ թարգմանիչք յակոբայից բունագատեալ էին ընդունում օտար բառեր, կամ օտար լիզուաց ձևով բարդութիւններ, այն էլ Հելլենացոց գողար ու փափուկ լիզուից, իսկ Ռուսաստանցի Հայերս սխալուամենք Ռուսաց օտարալիզու բառերն ու բարդութիւնները գործածել առանց պատշաճաւոր և ճիշդ ընտրողութեան, մանաւանդ զիտութեան վերաբերելի բառերը, որոնք Սրբ. Հեղինակը բաւականաչափ թուել է իր զբքուկի մէջ. Գ) օտար բառերին մեր անանցիչ մանիկներն ենք տալիս, որով աւելի այլանդակում ենք բառը ու լիզուն թէ հնչումով և թէ կազմութեամբ, ինչպէս զօրօրինակ՝ պրակտիկական (գործնական), զրամատիկական ևն. Գ) նշանագրերն, կետադրութիւնը, համառօտագրութիւնը առանց ամաչելու գործածում ենք և բոլորական լիզուների սեպհականութիւնից, երբ մենք ունենք աւելի յարմարներն ու թերևս զե-

ղեցիկները: Սրբազան Հեղինակը մասնաւորապէս յիշելով Հնդկարնակ Հայերի զգուշութեան մասին օտարոտի բառերի սխալ գործածութեան կողմից, վերջացնում է « իւր-իւրեք գործնական խոսքեր և հարկանքի մանաւանդ իւր-իւրեք խորհրդածութեամբ, որը, նորա Բերականութեան յառաջարանից է քաղուած՝ կերևի թէ իրրև նախընթաց խօսքերի և քննադատութեանց հաստատութիւն այս խորհրդածութեան մէջ. Հ Բագրատունին հայկաբանութիւնն կանոնաւոր կերպով ուսանելու հնարները համառօտակի ցոյց տալուց յետոյ՝ խորհրդածելով մեր լիզուի երբեմնական խանգարման մասին Գաւթի և այլոց զրուածների մէջ՝ վերջ է տալիս իրա դատողութիւններին Ասկան վարդապետի զրուածների վրայ, յայտնելով նորա զրուածքը « Ինչպէ՛ս լեւր սնն ընկնելով « Խանգարելու և Խանգարել ցորդք ևս զլիզուն » շատերի մտքի և զուածների մէջ: Այդ խօսքերը Սրբ. Հեղ. նօտադրով ներկայացուցել է ընթերցողների ուշադրութեանը գուցէ իրրև հայկաբանութեան խանգարումն հաստատելու վերջին կնիք:

« Խանգարմունք Հայկաբանութեան ի հնումն և ի նորումն, զբքուկի կարճառօտ բովանդակութիւնը ահաւասիկ ցոյց տուեց մեզ մեր հին լիզուի (գրաբառի) պատմական կեանքից մի քանի տեսարաններ « հարեանցի քննադատութեամբ, » Այս տեսակ աշխատութեան համար Սրբազան Հեղինակը արժան է, ի հարկէ, ընդհանուր շնորհակալութեան: Բայց տեսնելք թէ այդ զբքուկը կարողացաւ արդեօք լուծել այն հարցը, որը Սրբազան Հեղինակի « իւր-իւրեք գործնական խօսքեր և հարկանքի մանաւանդ իւր-իւրեք խորհրդածութեամբ, որը, նորա Բերականութեան յառաջարանից է քաղուած՝ կերևի թէ իրրև նախընթաց խօսքերի և քննադատութեանց հաստատութիւն այս խորհրդածութեան մէջ. Հ Բագրատունին հայկաբանութիւնն կանոնաւոր կերպով ուսանելու հնարները համառօտակի ցոյց տալուց յետոյ՝ խորհրդածելով մեր լիզուի երբեմնական խանգարման մասին Գաւթի և այլոց զրուածների մէջ: Այդ խօսքերը Սրբ. Հեղ. նօտադրով ներկայացուցել է ընթերցողների ուշադրութեանը գուցէ իրրև հայկաբանութեան խանգարումն հաստատելու վերջին կնիք:

Մեր զրականութիւնը և լիզուն՝ շատ դարեր ապրելով՝ շատ պատուական մատենագիրներ է ունեցել — յստակաբան և պերճաբան գեղեցիկ մատենագիրներ եմ ասում — որոնք արգա՛րև մեր զբրականութեան և լիզուի անթառամ ծաղիկներն են: Թո՛ղ յիշէ բանասէրն մեր Ս. Թարգմանչաց, Բերթողահայր պատմչի: Աւարայրի խօսնակի, Փարպեցի պատմաբանի, Կողբացի Աստուածաբանի և այլոց անունները — որոնք Ե - րդ դարի անկապտելի պարգևներն են: Սոցա կարգը թո՛ղ դասէ առանց սխալելու նոյնպէս պերճաբան Լամբրոնաց-

ւոյն և քաղցրատես Շնորհաբոյն և միս ԹԻ—րդ և հետեւալ զարի յստահարան երեւելացր։ Եւ այս մեր արդիւնաւոր Հարց քրտնքի արդար և զեղեցիկ պատուը թճճ տեսնէ՝ նմանապէս վերջին դարերուս պատուական հայկաբանների վաստակոց մէջ։ Այսպիսիներն են մեր կարծիքով մի քանի Միթիթարեան Հարք ինչպէս՝ Հ. Մ. Չառեան, Հ. Ա. Բաղրատունի, Հ. Եգ. Հիւրմուղ ևն. Յովհան քահանայ Աւանդեցի (ժերևս սորա աշակերտ) Մանր Մագիստրոս Մտերեանը), Միքայէլ վարդապետ Սալլանթեան, Գրիգոր վարդապետ Փէշաւալճեան և նոյն ինքն զբրուկիս Սրբազան հեղինակը Գարրիէլ Եպիսկոպոս Այվազեան։ Եւ յպատուական մատենագիրներն են, մեր կարծիքով, որ մեր Հայկաբանութեան (գրաբատի) համար իբրև նախատիպ և օրինակ են ընդունուում։ Մեր ճշմարիտ հայկաբանները երեք գլխաւոր շրջանների մէջ նորա են, ուրեմն մեր այժմու ճանաչած հայկաբանութիւնը, նոցա և նոցա ճշմարիտ հետեւորդների գրուածքի մէջ ենք տեսնում։

Այդ մատենագիրք իբրև իրանց զարի մարդ բունականաբար կարող էին նեթարկուել ժամանակակից ծաղկեալ լեզուների ազդեցութեանը ինչպէս օրինակ՝ Յունաց, Ասորոց ևն. և արդի եւրոպական լեզուին։ Երանի թէ լեզու քննողը զննելով այս ընդունուած Հայկաբանութեան առանձին անդամները և իւրաքանչիւրի տարրերը՝ ցոյց տար մեզ այն գործողութիւն — որով մեր բնիկ մայրենի լեզուն, բուն և ճշմարիտ հայկաբանութիւնը ընդունելով պատմական անցքերի երեսից օտար տարրեր - մաքուր է այդ օտար տարրերը և ձեւափոխուել։ Նա և եթէ զնէր մեր աչքի առաջ այնպիսի ուսումնական փաստեր և զննութիւններ՝ որոնք՝ =) ցոյց տային մեզ Խորենացոյ, Աղիշէի, թարգմանչաց ևն հայկաբանութեան միջից յունարանութիւնները՝ ասորաբանութիւնները, որոնք միով բանիւ ապացուցանէին որ հայկաբանութեան կանոնագրքի (որը կազմուած է յիշեալ հայկաբանների գրուածներից և համարուում է իբրև անտրտալ ձևնարկ ու առաջնորդ մեր այժմու գրոց լեզուի ուսումնականութեան համար) այս մեր Քերականութեան կանոնները խանդարուած են և խորք, և որոնք միով բանիւ զնէին մեր յատաջ

բնիկ հայկաբանութեան յատակ և պարզ կերպարանքը և նորա հետզհետէ կրած փոփոխութիւնները, այն ժամանակ կիսատուանէինք որ մեր լեզուի խանդարուելը ապացուցուել է։ Բայց զբնուկի բովանդակութիւնից հեշտ է նկատել, որ Սրբ. հեղինակը ուրիշ կերպ է ներկայացնում մեզ հայկաբանութեան խանդարմուկը։

Ա) Երրորդ զարի հայկաբանութիւնը հանդէս է գալիս մի քանի Հելլենախօս թարգմանիչների անունով — որոնց պարագլուխ է համարում Գաւիթ անյաղթ Ներքինացին, որի անհարազատ ոճիցը եղբափակում է մեր երրորդ զարի հայկաբանութեան խանդարուելը, այն ինչ նոյն դարում մենք ունինք Խորենացոյ, Աղիշէի, Աղիկի և այլոց պէս ընտիր մատենագիրներ, — որոնք արդարև դարերով ընդունուած են իբրև օրինաւոր հայկաբանութեան ներկայացուցիչք. իսկ Գաւիթ անյաղթը ոչ մի հայկաբան նրան չէ ընդունել իբրև օրինակ, այլ ընդ հակառակն նորա գրուածքը միշտ զրկուած են եղել գրականական ոյժից և ազդեցութիւնից։ Նորա մտցրած նորաձեւութիւնները կամ օտար տարրերը մեր լեզուն չէ կարողացել, մաքուր և իրա կազմակերպութեան նիւթ չինել, այլ միշտ օտար է եղել և է։

Բ) Երկրորդ շրջանի մէջ հանդէս են գալիս Լատինախօս հայկաբանները՝ Ասկան վարդապետ Երեւանցին, Արգան Յունանեանը, Բարսեղ չճայր ևն. ևն. այն ինչ մեր ԹԻ—րդ. և հետեւալ դարերի գրականութիւնը հազարամեայ յեղափոխութեանց ժամանակ կարող է լիովին պարծենալ Շնորհաբոյ, Լամբրոնացոյ և այլոց գրուածներով, — որոնք մինչ ցայժմ էլ ունեցել են իրանց ոյժն ու ազդեցութիւնը, իրանց գրականական նշանակութիւնը. իսկ Ասկանը, չճայն ևն. ոչ միայն չունին գրականական նշանակութիւն (բաց ի պատմականից)՝ այլ ամենքի աչքին էլ իբրև հայկաբան մատենագիրք բոլորովին աննշան են։

Գ) Աւերջապէս՝ Գ. րդ և վերջին շրջանի մէջ Սրբ. հեղինակը ցոյց է տալիս մեր լեզուի խանդարումը այժմու և անցեալ դարերի մի երկու թարգմանիչների օտարախորթ գրաբատ գրուածների մէջ Ռուսաց լեզուի ազդեցութեան տակ այն ինչ՝ այս դարերի մէջ մենք ունեցել ենք և

ունիք շատ պատուական հայկաբաններ թէ Մխիթարեան հարց միջից և թէ այլ հայկաբանների միջից: Սորա են ուրեմն մեր հայկաբաններն թէ ուղիղ և թէ սխալ, թէ պարզ և թէ խանգարուած վաստակներով, այլ ո՛չ Մարգար Զաքարեանց Խօջեանց Երևանցին, որոյ աննշան վաստակը հանդէս է բերում այժմու հայկաբանութեան խանգարումը ցոյց տալու համար, չ'հայելով որ նա չ'է ընդունուած իբրև մի ընտիր և հաճելի վաստակ - ունենալով աւելի ընտիրներն և միանգամայն հազուագիւտ թարգմանութիւնները ինչպէ՛ս զորօրինակ Հ. Հիւրմուզի «Արկածք Տնւնարայ», պանծալի թարգմանութիւնը: Սրբազան հեղինակին քաջ յայտնի է մանաւանդ՝ որ Ռուսաստանի Հայերի և առհասարակ այժմեան դարի Հայերի մեծ մասն Հայերէն գրոց բարբառ չ'գիտեն կամ շատ բորիկ են այդ հին լեզուի ուսման կողմից: Այժմեան ուսումն առած Հայերի մեծ մասը, Եւրոպական լեզուներին աւելի քաջահմուտ Հայ երիտասարդներն կամ մատենագիրներն, ա՛մօթ է աւել, մայրենի լեզուի ճշմարիտ ուսումից զուրկ են մանաւանդ գրարատի. բայց արդէն իրանց կարողութեան չափ վաստակներ են նուիրել մեր գրականութեան սեղանին, ոմանք էլ յանդիմն են հասարակութեան ժողովրդի առաջնորդ լինել իրանց խմբագրական գործունէութեամբ. չ'գիտնէք արդեօք այժմու այդ գրականական վաստակներն մեր յետադայ սերունդի ձեռքն ընկնելիս ինչ կերպ պէտք է դատուի նրանից: Խանգարուած է՝ պիտի ասէ, հայկաբանութիւնը կամ Հայոց լեզուի յստակաբանութիւնը, թէ կասէ սորա գրողը հայերէն չ'է գիտցել: Վարժեօք վերջին եղրակացութիւնս աւելի հաւանական է, ինչպէս որ այդ մեզ ժամանակակիցներս քաջ յայտնի է, մանաւանդ որ մեր յետադայ սերունդն ևս այդ վաստակները դատելիս, ընդունելով իբրև հայկաբանութեան պարզ և ընտիր նախատիպ՝ բազմարդիւն թարգմանչաց և նոցա հետևողների բարբառն, այն ժամանակ ևս հայկաբանութիւնը խանգարուած չ'է տեսնելու կարգալով Աստուածաշնչի թարգմանութիւնը, Խորենացւոյ, Եղիշէի և այլոց պատմութիւնքը. նոյնպէս և գիտնալով որ այս դարուս մէջ բաց ի այդ աննշան վաստակներն ունին շատ նշանաւոր-

ներն ևս մեր յիշեալ մատենագիրների և նոյն իսկ Սրբազան հեղինակի գրչից: Զէ՛ կարելի արդեօք այսպէս մտածել և Հելլենախօս, Աատինախօս մատենագիրների վերայ, ինչպէս որ մտածում ենք այժմու Ռուսախօս կամ այլախօս գրուածների վերայ: Գաւիթ անյաղթը՝ զորօրինակ, կարող էր վատ գիտնալ այն ժամանակուայ հայերէնը, ինչպէս երևում է նորա գրուածներից, մանաւանդ որ անյաղթը իբրև փիլիսոփայ է ընդունուած, այլ ո՛չ իբրև քերթող հայկաբան:

Այդ երեք շրջանների մէջ, ինչպէս յայտնի է բովանդակութիւնից, լեզուի խանգարման նկարագիրը մեր յառաջն է գնում մի քանի օտարախորթ մատենագիրների կամ թարգմանիչների անունը՝ որոնք բաց ի այն որ Հայոց գրարատ լեզուի մէջ շատ տկար են հանդիսանում, նրանցից շատերը գեռ երկար տարիներ հայրենիքից հեռութեան նորա ձգտմանցը, նորա գործերին մասնակից էլ չ'էին՝ այլ ընդ հակառակը ոմանք էլ հակակիր ձգտումներով աւելի օտարին էին օժանդակ և համակիր քան զիրայ հարազատին, զորօրինակ Ռեւիթթօք (որոնք միշտ Հայութեանն ամբարիշտ աչքով էին մտիկ տալիս), Արևմտ մենք այդ երեք շրջանների մէջ ինչքան էլ որ յափշտակուինք մի քանի օտարախորթ մատենագիրների նորաձև ոճերով ու բառերով, այնու ամենայնիւ ունենալով Մեսրոպներ, Խորենացիներ, Եղիշէներ Շնորհալիներ, Զամենաներ, Հիւրմուզներ ևն. մեր հայկաբանութիւնն ի հնումն և ի նորումս տեսնում ենք տակաւին իր պարզութեան և կայտառութեան մէջ, ո՛չ նորա այլանդակումն ենք նրկատում և ո՛չ խանգարումը, այլ միայն այն՝ որ Սրբազանի ցոյց տուած մատենագիրք չ'են գիտցել ինչպէս հարկն է մայրենի լեզու: Եթէ Խանգարումը ցոյց տուողը ցոյց տար մեզ օրինաւոր զննութեամբ զորա պատճառն ու հետեւանքը, ապացուցանէր մեզ որ այդ Հելլենախօս, Աատինախօս ևն. մատենագիրների վաստակները ունեցել են ոյժ և ազդեցութիւն, նմանապէս եթէ պատկանելի Հեղինակը ապացուցանէր մեզ որ այն մի քանի մատենագիրք ընտիր հայերէնագէտք են եղել այն ժամանակ անգամ անկարելի էր՝ թողած մեր վերջյիշեալ երևելի մատենագիրներին, մեր հայ-

կարանութիւնը խանդարուած ճանաչել, Բայց Արք. Տեղինակն իւր հետեւեալ խօսքերով թէ « Սակայն հարկ ի վերայ կայ ասել, զի և յայնմ թանձրամած տղիտութեան ժամանակի քաղաքացի յայն էին, որք ակն յայտնի տեսանէին զամենեկն օտարութիւն բառիցն և բանից այնպիսեաց ի նախնեացն ուղղախօսութենէ, վասն որոյ և լուսութիւն ազգիս առ սակաւ մի և եթ ժամանակ լուսութեամբ իմն ընկալեալ զանճոռնի նորաձեւութիւնսն, ապա իսկոյն ի բաց եթուք, և մնաց խաղտալուրն այն բարբառ իբրև ի սեպհական բաժին և ի կնիք Լատինացեալ Հայկազանց ժամանակին, ոչ միայն հաստատում է մեր միտքը, որ այդ հարեւրեւորութիւնը իրարմէն չեն ունեցել: Իրարմէն չեն և մեր վերջին իր պարզութիւնը չեն կորցրել: Եւ այդ մի բանի հարեւրեւորութիւնը չեն ունեցել: Եւ այլ ակներև ազգացուցանում է որ իր ցոյց տուած մի քանի շարագրութեանց միջի խորթութիւնները չեն: Խանդարմունք հայկաբանութեան ի հնումն և ի նորումս: »

Այս բոլոր ասածներէից հետեւում է որ « Խանդարմունք հայկաբանութեան ի հնումն և ի նորումս » զբրուկը չ'ունի իր վեճ հնչմանը համեմատ բովանդակութիւն և սխալ է կրում այդ վերնագիրը: Արովհետև մինչ մեր ակնկալութիւնն էր քաղել այդ զբրից մի ուսումնական ճշմարիտ արգիւնք լեզուաբանութեան կողմից, դրա փոխարէն մենք տեսնում ենք այնպիսի ցուցումներ, որոնք զուրկ են ուսումնական զօրեղ փաստերից, ուրիմն այնպիսի մի հարց պարզելու համար, ինչպիսին է « Խանդարմունք հայկաբանութեան ի հնումն և ի նորումս », և թէպէտ Գերապ. Արքազանը կարծում է որ իր խօսածն է « զղխաւոր յեղափոխութեանց Արամեանս լեզուի », վերնագրի մտքին համեմատ, սակայն զբրուկի բովանդակութիւնից և Արք. Տեղինակի բոլոր հարեւրեւորութիւնից և Արք. Տեղինակի բոլոր հարեւրեւորութիւնից հետ է և միանգամայն անհրաժեշտ է մակարերել՝ որ յիշեալ մատենագիրք և նոցա շարագրածքը ու թարգմանութիւնքը ո՛չ միայն ոչ մի յեղափոխութիւն չեն գործել Արք. Տեղինակի մէջ, այլ և « չեն խանդարեալ և չ'խանդարեն ցարդ ևս զլեզուն »:

Աւելի ուշադրութեան արժանի են Գերապ. Արքազանի կարեկցական խորհրդատուութիւնքը

և նորա ազգասիրական զգացմունքն արտայայտող տողերը, որոնք ինչպէս յայտնի է բովանդակութիւնից, թէ և հայկաբանութեան խանդարման հետ շատ քիչ յարաբերութիւն ունին, այնու ամենայնիւ արժանի են իւրաքանչիւր ճշմարիտ Հայի ուշադրութեանը: Աստ. քաղցր է ամենքիս էլ ի հարկէ, Արքազան Տեղինակի հետ յայտնել այն գովելի բաղձանքը մեր նուիրական լեզուի մշակութեան համար, որով մեր ջանախնդիր երիտասարդները և զրականական վաստակաւորք ողևորուած հանդէս են զարու մեր լեզուի մշակութեան գործում:

Աստի Գերապ. Արքազանի հետ փառաբանում ենք, որ « Թերևս չ'յետաձգուի այն ժամանակը երբ մեր ազգը կ'ունենայ ամենայն տեղ միայն մի շեք-բեկ վերստ ամենքին զիւրահաս և զիւրընտել, ինչպէս Տաճկաստանում նոյնպէս Պուստաստանում և Պարսկաստանում ու Հնդկաստանում »: որով մեր ազգային միութեան անքակտելի կապը ամրապնդուելուց զատ՝ հեշտ կ'լինի ամեն Հայի համար միևնոյն ընդհանրացած լեզուով արտայայտել իր մտքերը՝ ինչպէս առօրեայ յարաբերութեանց, նոյնպէս և հասարակական ու զրականական կարևորագոյն գործառնութեանց մէջ: Այսպիսով ոչ միայն համազգային մշակութեան առարկայի միութեան երեսից ամենայն Հայ միջոց կ'ունենայ մեր ընդհանուր պահանջների գործարանում փոխանակ մաս մաս բաժանելու իր ոյժը՝ միացնել մասնակցութեամբ իր լուսայն, այլ և լեզուի ու կրօնի փրկարար հովանաւորութեան տակ կ'պարարտանայ և կ'ունանայ այն նուիրական չքնաղ պարտէզը, որոյ դարևոր կեանքը արդէն մեր յաւերժայիշատակ նախնեաց անձնազիր հոգատարութեամբ մինչև մեր օրերը հասնելով՝ մի ծանր պատասխանատուութիւն է բարդում իր անցեալի անուամբ այժմու ազգայնոցս վերայ մեր մօտաւոր և յետագայ սերնդի տուային: Ահա այս իսկ կարևոր գործի վերայ կեղդոնացնելով մեր միահամուռ մտաւորական ոյժը՝ կ'ամրանայ ու կ'հաստատուի իրապէս մեր համազգային միութեան հաստահիմն խարխուրը:

